ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՖՈՆԴԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

«Հովհաննես Թումանյան թանգարան» ՊՈԱԿ-ի համալրումներն ունեն ժամանակագրական կառուցվածք: Ֆոնդերի համալրումը կազմակերպվում է տարվա կտրվածքով (տարեկան պլան) և համալրում եռամյա ծրագրի կտրվածքով (Համալրումը որպես թանգարանի զարգացման հայեցակարգի բաղկացուցիչ):

Ֆոնդերի համալրման երկարաժամկետ պլանն արտացոլում է մշտական մուտքերի կազմակերպում, ենթադրում թանգարանային և մշակութային արժեքների հեղինակների և սեփականատերերի հետ համագործակցություն, ներառում թանգարանի թեմատիկ ուղղությունների և գիտահետազոտական աշխատանքների ուղղություններ և հիմք է հանդիսանում տարեկան պլանի համար: Տարեկան պլանն արտացոլում է թանգարանի ընդհանուր գաղափարախոսությունից և առանցքային նպատակներից բխող ֆոնդային համալրումների կազմակերպում՝ տարվա կտրվածքով:

1. ՖՈՆԴԵՐԻ ՀԱՄԱԼՐՈՒՄ

Թանգարանի՝ որպես գիտակրթական առաջնակարգ օջախի գործունեության առանցքային կողմերից մեկը ֆոնդերի համալրումն է:

Թանգարանի հիմնական ֆոնդի ձևավորումն ու համալրումը բխում են թանգարանի գիտական հայեցակարգից՝ մասնավորապես թանգարանի նպատակներից ու խնդիրներից և թանգարանի զարգացման հայեցակարգի՝ ֆոնդերի համալրման գիտական հայեցակարգ բաղադրիչից: Համալրումը ենթադրում է ֆոնդի ստեղծման կոնկրետ աղբյուրների որոշում, դրանց ձեռքբերման միջոցները, ուղղությունները և իրականացումն այն հաշվով, որ հնարավորինս լիարժեք արտացոլեն թանգարանի ամբողջական էությունն ու գաղափարախոսությունը:

Համալրումը կհիմնվի թանգարանի՝ արդեն ունեցած նյութական արժեքների հավաքածուների հանգամանալից վերլուծության ու տեսության հիմնա վրա, որը թույլ կտա վեր հանել ֆոնդի վիճակի իրական պատկերը՝ հասկանալով ուժեղ ու թույլ կողմերը:

Հովհաննես Թումանյանի թանգարանի հավաքածուն որոնողական աշխատանքների արդյունքում մշտապես համալրվում է Հովհաննես Թումանյանին վերաբերող տարատեսակ նյութերով՝ հուշային առարկաներ, ձեռագրեր, կերպարվեստի նմուշներ, հրատարակություններ և այլն: Հիմնական ֆոնդը պարբերաբար համալրվում է նաև բանաստեղծի ժառանգների կողմից:

Առաջիկայում համալրման հայեցակարգով նախատեսվում է ձեռք բերել (հնարավոր է նաև փուլային եղանակով) Մարտիրոս Սարյանի՝ Թումանյանի ընտանիքի անդամների ճեպանկարները: Վարպետի ձեռքով արված այդ դիմանկարները հաստատում են Թումանյանների և Սարյանների դարավոր ջերմ բարեկամությունը:

Այդ գործընթացը իրականացվում է թանգարանի ֆոնդային-գնահատող հանձնաժողովի, գիտխորհրդի և ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայության փորձագիտական կենտրոնի մասնագետների եզրակացության հիման վրա:

2. ՖՈՆԴԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համալրման գործընթացը տեղի կունենա՝ պահպանելով թանգարանային առարկաների միմյանց հետ կապված հատկանիշների պահպանման սկզբունքը. պատմական ժամանակաշրջան, միևնույն իրադարձության, անձի, հեղինակի, սկզբնաղբյուրների տեսակի պատկանելիություն և այլն: Համալրվող առարկաները կարող են միավորել ընդհանուր թեման, ստեղծման ժամանակը, սյուժեն, միջավայրը, նյութը, պատրաստման եղանակը: Շատ կարևոր է այդ կապերը հաշվի առնել, քանի որ այն տեղեկատվությունը, որը հաղորդում է միմյանց փոխկապակցված առարկաների խումբը, շատ ավելի հագեցված, տարողունակ ու արժեքավոր է, քան կարող է կրել մեկ առանձին վերցրած առարկան: Ըստ այդմ՝ ֆոնդային համալրումները կատարվում են տարբեր հատկանիշներով հավաքածումների խմբավորումներով:

Նախատեսվում է համալրում հետևյալ ուղղություններով.

- **Թեմատիկ հավաքածու**- հավաքածուներ, որոնք կազմվում են տարբեր տիպի փաստաթղթերի, լուսանկարների, արվեստի ստեղծագործությունների հիմնա վրա և իրենց ամբողջության մեջ բացահայտում են որոշակի թեմա:

- **Մեմորիալ (անձնական) հավաքածու**- ամենատարբեր առարկաների այն խումբը, որը կապված է որոշակի անձի կամ պատմական իրադարձության հետ, ներառում է անհատ անձի կողմից ստեղծված ու թանգարանի պահպանությանը հանձնված արժեքավոր առարկաների խումբ:
- **Միստեմատիկ հավաքածու-** առարկաները խմբավորվում են հավաքածուներում տարբեր հատկանիշներով՝ ըստ սկզբնաղբյուրների տեսակի, ծագման ու բովանդակության: Հովհաննես Թումանյան թանգարանը կշարունակի թերթերի, ամսագրերի, գրքերի ֆոնդային համալրման աշխատանքները:

3. ՀԱՄԱԼԱՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՖՈՆԴԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍ

Թանգարանային ֆոնդի համալրումը սկսվում է համալրման գիտական հայեցակարգի մշակումից: Համալրման գիտական հայեցակարգը թանգարանի ընդհանուր զարգացման գիտական հայեցակարգի բաղկացուցիչն ու պարտադիր փաստաթուղթն է: Թանգարանային ֆոնդերը ստեղծվում են ծրագրավորված, կանոնակարգված և համակողմանի գիտական որոնումների և մշակումների արդյունքում: Ֆոնդերի գիտահետազոտական աշխատանքների հիմնական արդյունքը թանգարանային հավաքածուների ստեղծումն ու դրանց համալրումն է:

Հովհաննես Թումանյան թանգարանի՝ կանխատեսվող ֆոնդային համալրումները կդառնան նոր գիտական գործունեության հիմք: Այդ աշխատանքների հիմքով կկազմվեն գիտական հաշվետվություններ, կստեղծվեն նոր ցուցահանդեսներ՝ հնի և նորի համադրմամբ, կհրատարակվեն գիտական հոդվածներ, մենագրություններ, կստեղծվեն կատալոգներ: Թանգարանային ֆոնդերի համալրումները կառաջացնեն գիտական գործունեության վերանայման և նոր ուղղություններով կազմակերպելու պահանջներ:

Տնօրենի ժ/պ.՝ /Լ. Ղարախանյան